

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## Մ Ա Ր Դ Յ Ա Ն Գ Ո Ղ Ա Ր Ս Ե Ր Գ Ե Յ Ի

**ՋԼՄ-ՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԼՂՀ-ՈՒՄ**

**Ժ. 01.06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

## Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

**ԵՐԵՎԱՆ - 2012**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
**ԴՈՅԴՈՅԱՆ ՇՈՒՀԱՆ ՄԿՐՏՁԻ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
**ՅՈՎԱՆԵՓՅԱՆ ՄՈՒՇԵՂ ՄԱՅԻՍԻ**

բանասիրական գիտությունների  
թեկնածու  
**ԱՐԱՐԱՄՅԱՆ ԳՈՌ ՄԱՐԶՊԵՏԻ**

Առաջատար կազմակերպություն՝

Խ.Աբովյանի անվան  
հայկական պետական  
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. դեկտեմբերի 5-ին՝ ժամը 14<sup>30</sup>-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՂ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. նոյեմբերի 3-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝  
բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր՝

**ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ**

## ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ատենախոսությունը նվիրված է ՋԼՄ-ների օրենսդրական կարգավորմանը և ինքնակարգավորմանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

Հայ լրագրությունը ազգային օրինաչափություններով ու առանձնահատկություններով դարեր ի վեր անցել է երկար ու բեղուն ճանապարհ՝ ի սկզբանե մասնակից լինելով հայ ժողովրդին բաժին ընկած ճակատագրին: Լինելով ճանաչողական ինքնուրույն արժեք՝ տարիներ շարունակ այն ծառայել է համամարդկային տեղեկատվական իրավունքների և ազատությունների պաշտպանության գերխնդրին: Հայ լրագրության զարգացման բազմադարյա պատմության մեջ իր յուրահատկությամբ աչքի է ընկնում հայկական բնաշխարհի արևելյան հատվածի՝ Արցախի լրատվական դաշտը:

Պատմաքաղաքական դժվարին պայմաններում Արցախի մամուլի<sup>1</sup> գործունեությունը հարատևել է անհամաչափ առաջընթացով: 20-րդ դարի 90-ական թվականներին տեղի ունեցած բախտորոշ իրադարձությունները երկրամասի պատմության մեջ նշանավորվել են լրատվական դաշտի փոփոխություններով, որոնք որակապես փոխել են երկրամասի «չորրորդ իշխանության» բնույթն ու կերպարը: Այդ փոփոխությունները վճռական դեր են խաղացել արցախահայության կյանքում՝ հիմք դնելով նոր ժամանակի պահանջներին համահունչ ժողովրդավարական արժեքների ու աշխարհայեցողության: Արդի ժամանակներում անհրաժեշտություն է առաջացել ԼՂՀ անվտանգության ապահովման, երկրի ազատականացման, քաղաքացիական հասարակության կայացման, համամարդկային իրավունքների և պարտականությունների հաշվեկշռման, Հայաստանի Հանրապետության լրագրության ինտեգրման, տեղեկատվական դաշտի զարգացման գործընթացներում դիտարկելու և գիտականորեն արժևորելու զանգվածային լրատվության միջոցների<sup>2</sup> օրենսդրական կարգավորումը և ինքնակարգավորումը: Նորաստեղծ հանրապետության համար առաջադրվում են ոչ միայն մամուլի գիտական ուսումնասիրությունը, լրատվական դաշտի ապահովությունը, տեղեկատվական հասարակության կայացումը, այլև ժողովրդավարության զարգացմանը միտված ռազմավարության ուրվագծումը: Վերջինիս ապահովման երաշխիքներից է ՋԼՄ-ների կարգավորման և ինքնակարգավորման մեխանիզմների արդյունավետ գործառնությունը, որը թույլ կտա ներկայանալ տեղեկատվական շուկայում ընդունված միջազգային չափանիշներին և գլոբալ մարտահրավերներին համարժեք: Մյուս կողմից Արցախի՝ որպես ժողովրդավարական պետության կայացման համար գոյություն ունեն որոշ խանգարիչ գործոններ, որոնք արգելակում են ազատ և անկախ լրատվամիջոցների զարգացումը: Դրանք են՝ քաղաքական ուժերի և ինստիտուտների ձևավորված չլինելը և այդ ինստիտուտների բարդ իրավահարաբերությունների անկանոնությունը, քաղաքացիների իրավական գրագիտության ցածր մակարդակը, հասարակությանն այդ ազդանշանների տրամադրման բացակայությունը, այլընտրանքային լրատվամիջոցների բացակայությունը, մամուլի ֆինանսատնտեսական ոչ բավարար հնարավորությունները, դատաիրավական մեխանիզմների անկայունությունը, լրատվական և իրավական դաշտի միջև թերի իրավահարաբերությունները, ինքնակարգավորման մեխանիզմների անկի-

<sup>1</sup> Հետազոտության մեջ «մամուլ» տերմինը ներառում է տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցները:

<sup>2</sup> Այսուհետ՝ ՋԼՄ-ներ:

րառելիությունը, մամուլի ու հասարակության միջև երկխոսության բացակայությունը և այլն:

ԶԼՄ-ների կարգավորման և ինքնակարգավորման մեխանիզմների փոխազդեցությունն անխուսափելի է և այդ իրողությունն աչքի առաջ ունենալով՝ հարկ է դրանք հետազոտել և գիտականորեն գնահատել, ինչպես նաև նկատի ունենալով երկրի քաղաքական մշակույթի պայմանները՝ տեսական ուսումնասիրություններ կատարել: ԶԼՄ-ների օրենսդրական կարգավորման և ինքնակարգավորման ուղրտները, բնորոշելով արցախյան լրատվադաշտի ներկա վիճակը, միաժամանակ ստեղծում են նախադրյալներ լրագրության հետագա զարգացման համար: Վերջին ժամանակաշրջանում Արցախի լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող իրավական փաստաթղթերի վերամշակումները, ինքնավարության ուղրտում էթիկական արժեքների բարեփոխությունները նախանշել են լրատվական հիմնախնդիրների նորովի ընկալման և արժևորման ուղիներ: Այսուհանդերձ, անկախության հռչակումից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանն առ այսօր չի դիտարկվել որպես ԼՂՀ տեղեկատվական դաշտի իրավական ու բարոյական հետազոտության առանձին առարկա և փաստորեն չի ենթարկվել ամբողջական և համակարգված գիտական ուսումնասիրության:

### **ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ատենախոսության թեման արդիական է, քանի որ քաղաքական, սոցիալ-տնտեսական, օրենսդրական և բարոյահոգեբանական գործոնների համալիր վերլուծությունների կտրվածքով հնարավորություն է տալիս խոր և բազմակողմանի ուսումնասիրելու ԶԼՄ-ների օրենսդրական կարգավորման և ինքնակարգավորման մեխանիզմները:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է՝ ա/ ԶԼՄ-ների իրավական կարգավորման և ինքնակարգավորման մեխանիզմների հարաբերակցության քննարկմամբ ու կատարելագործմամբ, բ/ լրատվադաշտի հետագա զարգացման գործում սույն հետազոտության տեսական և գործնական նշանակությամբ, գ/ տեղեկատվական ուղրտի յուրահատկություններով, դրական և բացասական դրսևորումների իրական և ճշգրիտ գնահատման, արժևորման իրողություններով, դ/ լրագրողի կողմից իրավական ու բարոյական գիտելիքները յուրացնելու և իրավակիրառ պրակտիկայում ներդնելու անհրաժեշտությամբ:

Ուսումնասիրության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է ատենախոսության մեջ տեղ գտած հարուստ նյութերով և հարցադրումների կառուրությամբ:

1. Հրապարակելով փաստացի տեղեկություններ՝ գիտական հետազոտությամբ անուղղակիորեն կարելի է ազդել հանրապետության լրատվադաշտը կանոնակարգող իրավական միջավայրի կայացման խնդիրներին, դիտարկումներով և համարժեք ընդհանրացումներով խթանել Արցախի լրագրողների իրավական պաշտպանությանը, անվտանգությանը՝ ներառյալ պաշտպանությունը բարոյական ու ֆիզիկական հարձակումներից:

2. Ատենախոսության մեջ դիտարկվում են արցախահայ լրագրության էթիկական սկզբունքների գործնականում անկիրառելիության պատճառները: Թերությունները համակողմանիորեն բացահայտելու նպատակով առաջադրվում են շոշափելի խախտումները և նոր առաջարկություններով ներկայանում մասնագիտական նեղ խմբերին:

3. Առաջարկվող հիմնադրույթները գործնականում կարող են կիրառվել ԼՂՀ պետական կառավարման մարմինների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, հանրային նշանակության կազմակերպությունների, հասարակական ինստիտուտների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, լրագրողների կողմից:

4. Ուսումնասիրության մեջ լրագրափրավագիտական դրույթները կարող են կիրառվել տեղեկատվության ազատության ոլորտում իրավական դաշտի բարելավման, լրատվական միջավայրի ինքնակառուցման և ժողովրդավարական արժեքների ամրապնդման համար, ինչպես և գիտական օջախներում իրավապաշտպան ուսանողների ներուժն արդյունավետ օգտագործելու նպատակով:

5. Իրավական և բարոյական տեսանկյունից այն ուսումնասիրություն է, որը ծանոթացնում է լրագրողական դեմքերին՝ նրանց նկարագրի մեջ ընդգծելով մասնագիտական առաքինություններն ու թերացումները:

### **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ուսումնասիրության առարկան ԼՂՀ անկախության հռչակումից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածում պատմական, ազգային-քաղաքական, զարգացումներով պայմանավորված՝ ԶԼՄ-ների օրենսդրական կարգավորման և ինքնակարգավորման մեխանիզմներն են:

Հետազոտության նպատակը ժողովրդավարական բարեփոխումների գործընթացում ԶԼՄ-ների օրենսդրական կարգավորման և ինքնակարգավորման մեխանիզմների ապահովման նպատակով ԼՂՀ-ում առկա հիմնախնդիրների բացահայտումը և կատարելագործման ուղիների նախանշումն է:

Ատենախոսության արդիականությունից և նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել ԼՂՀ չճանաչվածության պայմաններում տեղեկատվական դաշտի համապատկերը և բացահայտել տեղական լրատվության յուրահատկությունները, մանուլի ազատության կայացման արդիական միտումները,

2. Դիտարկել անցումային փուլում գտնվող երկրի լրատվական ոլորտի ինքնավարության և հասարակական մյուս ինստիտուտների միջև իրավահարաբերությունները ու հիմնական բնորոշ գծերը,

3. Վերլուծել լրատվամիջոցների գործունեության իրավական ու բարոյական համակարգերը, բացահայտել դրանց հիմնական առանձնահատկություններն ու առկա հիմնախնդիրները,

4. Գնահատել ու կիրառել ՀՀ և արևմտյան երկրների համանուն բնագավառների արժեքավոր ժառանգությունը արցախահայ լրագրագիտության համակարգում,

5. Նախանշել մանուլի ինքնակարգավորման միջոցների կատարելագործման, պատասխանատու և արհեստավարժ լրագրության զարգացման ուղիները:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

Ուսումնասիրության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ գիտական վերլուծությունների և ընդհանրացումների միջոցով ներկայացվում է ԼՂՀ-ում ԶԼՄ-ների իրավական կարգավորման և ինքնակարգավորման մեխանիզմների համակողմանի ու համակարգված քննությունը մեկ աշխատության տիրույթում: Ատեն-

նախտություն գիտական նորույթը ցույց է տրվում հետևյալ հիմնական գիտական արդյունքների միջոցով.

1. Ուսումնասիրելով Արցախի լրագրության ազգային, գաղափարական առանձնահատկությունները և ավանդույթները՝ կարևորվել է պետության, հասարակության և լրատվամիջոցների միջև վստահության ու համագործակցության հիմնահարցը:

2. Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության և քաղաքական հիմնախնդրի օրինական հանգուցալուծմամբ պայմանավորված՝ արժևորվել են տեղեկատվական մեխանիզմների ուսումնասիրությունը և միջազգային արդի պահանջներին համապատասխան քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

3. Ուսումնասիրելով խոսքի և տեղեկատվության ազատության հայեցակարգը, խոսքի ազատության միջազգային պաշտպանությունը, լրագրողների իրավունքների և ազատությունների ուսմահարման, չարաշահման դեպքերը՝ կարևորվել է ՁԼՄ-ների օրենսդրության դերը ԼՂՀ քաղաքական անվտանգության գործընթացում:

4. Վերլուծելով ՁԼՄ-ների օրենսդրական կարգավորման թերացումները, մասնագիտական արժեհամակարգի գործնական անկիրառելիության դրդապատճառները և մամուլի պատասխանատվության մեխանիզմների անկատարությունը՝ առաջադրվել են Արցախի լրագրողների իրավունքների պաշտպանության և առաջադիմական բարոյական չափանիշների խրախուսման հարցերը:

5. ՁԼՄ-ների օրենսդրական կարգավորման և ինքնակարգավորման մեխանիզմների կատարելագործման գործընթացում հիմնավորվել են գիտական առաջարկությունները, սեփական դիտարկումները և հնարավոր փոփոխությունները:

Արցախում ՁԼՄ-ների օրենսդրական կարգավորման և ինքնակարգավորման մեխանիզմները քննության չեն ենթարկվել գիտական շրջանակներում: Ներկայումս եզակի են Հայաստանի լրագրագիտության ասպարեզի ներկայացուցիչների կողմից լրագրողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ աշխատությունները: ՁԼՄ-ների օրենսդրական համակարգը տարբեր տեսանկյուններից դիտարկել են Կ. Անդրեասյանը<sup>3</sup>, Շ. Դոյրոյանը<sup>4</sup>, Օ. Սաֆարյանը<sup>5</sup>, ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախոսներ Ն. Մարտիրոսյանը, Ս. Հովսեփյանը, Ս. Հարությունյանը, Ս. Մամյանը, Ս. Պետրոսյանը, Լ. Սայադյանը և այլք՝ իրենց ատենախոսություններում և առանձին հոդվածներում, որոնք լույս են տեսել ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի ֆակուլտետի կողմից հրատարակվող «Ժուռնալիստիկա» (տեսության և պատմության հարցեր) պրակներում<sup>6</sup>: ՁԼՄ-ների իրավական կարգավորման և ինքնակարգավորման ոլորտներին վերաբերող կարևոր ուսումնասիրություններ և թարգմանություններ է կատարել Երևանի մամուլի ակումբը<sup>7</sup>:

<sup>3</sup> Տես Անդրեասյան Կ., Տեղեկատվական իրավունք, «Ասողիկ» հրատ., Երևան, 2004, 356 էջ:

<sup>4</sup> Տես Դոյրոյան Շ., Սահմանադրությունը մամուլի ազատության երաշխավոր, ԵՊՀ հրատ., Երևան, 2001, 250 էջ, ՁԼՄ և օրենսդրություն, «Ասողիկ» հրատ., Երևան, 2007, 114 էջ:

<sup>5</sup> 21<sup>st</sup> century challenges for the media in the South Caucasus (First South Caucasus media conference Tbilisi, 25-26 october 2004), OSCE the representative on freedom of the media, Vienna, 2005, 320 pages:

<sup>6</sup> Տես «Ժուռնալիստիկա. տեսության և պատմության հարցեր», Պրակ Ա, Բ, Գ, Դ, Ը, ԵՊՀ հրատ., Երևան, 1999-2007:

<sup>7</sup> Տես «Ինքնակարգավորում, Միջազգային փորձն ու հեռանկարները Հայաստանում», ԵՄԱ, «Անտարես» հրատ., Երևան, 2004, 84 էջ, Քաղաքական պայքարը և լրագրողի մասնագիտական բարոյականությունը, թրգ.՝ ԵՄԱ, «Վան Արյան» հրատ., Երևան, 2000, 155 էջ:

Արցախյան լրատվամիջոցների իրավահարաբերություններին առնչվող հարցերը համառոտակի շոշափվել են Հ. Ալեքսանյանի ուսումնասիրության մեջ<sup>8</sup>, որտեղ ներկայացվել է տեղեկատվական դաշտի համապատկերը, բացահայտվել խոսքի ազատության ճանապարհին չճանաչված երկրի լրատվության խնդիրները և առանձնահատկությունները: Հեղինակը ցույց է տվել լրատվական բազմազանության մեջ նրա շոշափած հիմնահարցերի կարևորությունը, հատկապես արցախյան շարժման և ազատամարտի տարիներին, նաև որակապես գնահատել է ՁԼՄ-ների օրենսդրական դաշտի ձեռքբերումները: Չնայած նշված հիմնահարցերը Հ. Ալեքսանյանը քննարկել է համառոտ ուրվագծերով, սակայն գիտական հիմնավորվածությամբ դրանք իրենց լուրջ նպաստն են բերել իրավական դաշտի արժեքավորմանը:

ԼՂՀ լրատվադաշտի զարգացման հետ սերտորեն կապված՝ մեծ աշխատանք է կատարվել «Արտիկ 19» միջազգային կազմակերպության<sup>9</sup>, Տեղեկատվության ազատության կենտրոնի<sup>10</sup>, «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության<sup>11</sup>, Երևանի և Ստեփանակերտի մամուլի ակումբների գիտահետազոտական աշխատանքներում<sup>12</sup>: Վերջիններս միջազգային նախագծերի շրջանակներում եռանդուն մասնակցություն են ցուցաբերել Արցախում լրատվամիջոցների գործունեության վերաբերյալ օրենքների նախագծման, ընդունման, ինչպես նաև մասնագիտական որակավորման ոլորտում թրեյնինգների, սեմինարների, բանավեճերի, հանրառաջավորների կազմակերպման գործում: Ատենախոսության համար օգտակար են եղել խնդրի ուսումնասիրմամբ մտահոգ Արցախի լրագրողների՝ Հ. Ղահրիյանի, Գ. Բաղդասարյանի, Ռ. Իշխանյանի, Ն. Հայրունյանի, Կ. Օհանյանի, հրապարակումները տպագիր մամուլի էջերում<sup>13</sup>:

Ինչ վերաբերում է մամուլի ինքնակարգավորման արժեհամակարգին, ապա բարոյաէթիկական տարբեր խնդիրների մասին հանրապետության մասշտաբով գիտական ուսումնասիրություն չի կատարվել և էթիկայի սկզբունքները չեն դիտարկվել իրավական կարգավորման առանձնահատկությունների համատեքստում: Ինքնակարգավորման ոլորտի հիմնահարցերը քննելու և արդյունավետ լուծումներ առաջադրելու նպատակով ատենախոսության մեջ ընդգրկվել են արցախյան լրատվադաշտի էթիկայի խախտումները: Փորձ է արվել աշխատանքում միավորել իրավաբանության և լրագրության, բարոյագիտության և լրագրության գործառույթները, որոնց մասին հարցադրումները չեն համակարգվել բարոյաիրավագիտական հետազոտություններում:

Լրագրության հիմնահարցերի ուսումնասիրությունը հայտնի չափով լրացվում է երկրում լույս տեսնող Արցախի պետական համալսարանի հրատարակած

<sup>8</sup> Տե՛ս Ալեքսանյան Հ., Չճանաչված երկրի լրատվությունը, Ստեփանակերտ, «ԴԻՁԱԿ ՊԼՅՈՒՄ» հրատ., 2011, էջ 96:

<sup>9</sup> Տե՛ս 21<sup>st</sup> century challenges for the media in the South Caucasus: A report by Article 19, The global campaign for free expression, Vienna, 2005, page 95:

<sup>10</sup> Տե՛ս «Դու տեղյակ լինելու իրավունք ունես», Տեղեկատվության ազատության կենտրոն, խմբ. Շ. Դոյրոյան, Երևան, Տեղեկագիր N 1-15, 2001-2007:

<sup>11</sup> Տե՛ս «Իրավական ուղեցույց հեռարձակողների համար», «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2004:

<sup>12</sup> Տե՛ս ՁԼՄ-ի ինքնակարգավորում. Առաջին քայլերը Հայաստանում, ԵՄԱ, ԲՀԻ, Երևան, 2007, 21 էջ: Լրագրողական էթիկա, ՍՄԱ, «ԴԻՁԱԿ ՊԼՅՈՒՄ» հրատ., Ստեփանակերտ, 2007, 160 էջ:

<sup>13</sup> Տե՛ս «Ազատ Արցախ», «Ղեմո», «10-րդ նահանգ» թերթերի 1991-2012 թթ. տարեհամարները:

տեղեկագրերով<sup>14</sup> և «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» գիտական ժողովածուով<sup>15</sup>, որտեղ ներկայացվում են լրագրական-հրապարակախոսական խնդիրներ: Ներկա ժամանակում տեղի լրագրողները բավարարվում են պարբերական մանուլում և գիտաժողովներում առանձին հրապարակումներով հանդես գալով, որոնք հեռու են ատենախոսության խնդիրների գիտական մեկնաբանությունը լինելուց:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Ատենախոսության գիտական հիմնավորվածությունը և հավաստիությունը ապահովված են լրագրաիրավագիտության ուսումնասիրության արդի մեթոդներով և սկզբունքներով: Ըստ անհրաժեշտության՝ կիրառված են պատմաքննական, համեմատական և համադրական մեթոդները: Աշխատության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ԼԴՀ օրենսդիր, գործադիր իշխանությունների ընդունած օրենսդրական ակտերն ու որոշումները, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային համաձայնագրերում ամրագրված համընդհանուր նորմերն ու սկզբունքները, մասնագիտական էթիկայի դրույթները: Հետազոտական լուսի ներքո հանգամանորեն քննվում են սկզբունքային նշանակություն ունեցող մեկնարկային, ընթացիկ և ապագայի խնդիրները, արցախահայության հասարակական-քաղաքական կյանքում կատարվող բախտորոշ տեղաշարժերը, ազատասիրական գաղափարների ներթափանցումը երկրամաս, որոնք լրատվադաշտի վրա նոր հետևանքներ են առաջացրել:

Առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են ծառայել իրավագիտական և բարոյաէթիկական դասական ու ժամանակակից դրույթները, հայ և օտարազգի տեսաբանների աշխատությունները, անկախ մանուլի կայացմանը միտված ժամանակակից տեսությունները: Հիմնվելով համաշխարհային պրակտիկայում ընդունված տեսական և գործնական գիտելիքների վրա՝ հետազոտության մեթոդներ են հանդիսացել ա/ պատմական փաստերի, գիտական հոդվածների, աշխատությունների, սկզբնաղբյուրների վերլուծություններ, առաջադեմ տեսաբանների արտահայտած մտքերի, գաղափարների համեմատություններ ու ընդհանրացումներ, բ/ արխիվային վավերագրերի, իրավական փաստաթղթերի, օտարալեզու գրականության, համացանցային տեղեկատվության, 1991-2012 թթ. պարբերական մանուլում հարապարակված վերլուծական- հրապարակախոսական, զեղարվեստական-հրապարակախոսական նյութերի ուսումնասիրում, համադրում և ընդհանրացում, գ/ սոցիարցման և դիտարկման անցկացում:

## **ՈՒՍՈՒՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ատենախոսության մեջ արծարծված որոշ հիմնախնդիրներ և դրույթներ զեկուցվել են Արցախում կազմակերպված համալսարանական և միջբուհական գիտաժողովներում: Տպագրվել են հոդվածներ ԼԴՀ և ՀՀ գիտական պարբերականներում և ամսագրերում:

<sup>14</sup> Տե՛ս ԱրՊՀ, գիտական տեղեկագիր, ԱրՊՀ հրատ., Ստեփանակերտ, 2003-2010:

<sup>15</sup> Տե՛ս «Լրատու» գիտական հոդվածների ժողովածու, Մեսրոպ Մաշտոց համալսարան, 2(11), «ԳԻԶԱԿ ՊԼՅՈՒՄ» հրատ., Ստեփանակերտ, 2011:



Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ-ի Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի պատմության և տեսության ամբիոնում:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից: Ատենախոսությունը պարունակում է հինգ աղյուսակ, մեկ ծանոթագրություն, ընդհանուր ծավալը՝ 182 էջ: Գրականության ցանկում բերված են 95 աղբյուրներ:

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ հիմնավորվել են թեմայի գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը, արդիականությունը, պարզաբանվել են հետազոտության նպատակը, խնդիրները: Ներկայացվել են աշխատանքի մեթոդաբանական հիմքերը, գործնական մշանակությունը և գիտական նորույթը:

## **ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

### **ՁԼՆ-ՆԵՐԻ ՕՐԵՆՍՊՐՈՒԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵՆԱՆԻՋՄԵՆԸ**

Այս գլուխը բաղկացած է յոթ ենթագլուխներից, որտեղ քննարկվում են խոսքի ազատության սահմանադրական երաշխիքները, խոսքի ազատության ազգային և միջազգային իրավական կարգավորման առանձնահատկությունները, տեղեկատվության ազատության մասին իրավական դրույթները, տպագիր և էլեկտրոնային լրատվադաշտը կանոնակարգող օրենսդրությունը, ընտրական գործընթացներում լրագրողների իրավունքների պաշտպանությունը, խոսքի ազատության ոտնահարման և չարաշահման դեպքերը, դատական և արտադատական պաշտպանության ու պատասխանատվության մեթոդները: Առաջին ենթագլուխը վերնագրել ենք **«խոսքի ազատության սահմանադրական կարգավորումը»**, որտեղ անդրադարձել ենք պատմական Արցախի տարածքում իրավակարգի ակունքներին, օտար իրավաքաղաքական դաշտի ազդեցության հետևանքներին և ԼՂՀ պետականաշինության գործում խոսքի ու արտահայտվելու ազատության հայեցակարգի հիմնադրույթներին:

ԼՂՀ պետականության ամրապնդումն ու զարգացումը նոր հեռանկարներ է բացել խոսքի և մամուլի ազատության պաշտպանության, տեղեկատվական հասարակության կայացման համար: Պատերազմական ու հետպատերազմյան դժվարին տարիներին ազգային ինքնուրույնությանն ու հավատին սպառնացող վտանգը համախմբել ու միավորել է հասարակական-քաղաքական բոլոր ուժերին: Դրա համոզիչ վկայությունն է արցախյան պատերազմում հայ ժողովրդի փառավոր հաղթանակը՝ հանուն ազատության և անկախության, հանուն հայապահպանության և իրավական պետության կայացման: 20-րդ դարավերջին երկրի ազատականացման հետ մեկտեղ զարգացել է մի հիմնական գաղափար, որ մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները պետք է առավելագույնս պաշտպանված լինեն պետության կողմից, մասնավորապես արտահայտվելու ազատության իրավունքը, միևնույն ժամանակ նկատի ունենալով, որ «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» կարգավիճակի մեջ խոսքի և մամուլի ազատությունը

բացարձակ չեն կարող լինել: Երկրի իրավական համակարգը պետական, ազգային, քաղաքական շահերին նպաստելու նպատակով թույլատրել է մամուլի որոշակի աստիճանի կարգավորումը և սահմանափակումների անհրաժեշտությունը: Երկրամասում խոսքի ազատության երաշխիքները ամրագրվել են «ԼՂՀ-ում պետական անկախության սկզբունքների մասին» սահմանադրական օրենքում, «Ձանգվածային լրատվության միջոցների մասին» (1999), «Յեռուստատեսության և ռադիոյի մասին» (2002), «Յեռիմակային և հարակից իրավունքների մասին» (2003), «Տեղեկատվության ազատության մասին» (2004), «Ձանգվածային լրատվության մասին» (2004) օրենքներում: Վերոհիշյալ փաստաթղթերում ամրագրված լրագրողների իրավունքները և ազատությունները որոշ նկատառումներով չեն համապատասխանել Սահմանադրության նախագծի դրույթներին, որոնք անհանգստություն են առաջացրել լրատվական դաշտի ներկայացուցիչների շրջանում: Տարածայնության առիթ է տեղծել այն, որ հայկական երկու անկախ պետությունների մայր օրենքներում սկզբունքային տարբերություններ կան, այն դեպքում, երբ ԼՂՀ իշխանությունները պնդում են, որ ԼՂՀ-ն և ՀՀ-ն գտնվում են իրավաքաղաքական ու ֆինանսատնտեսական նույն հարթության վրա: Լրատվական հանրության կարծիքով տրամաբանական չէ այդ հենքն ունենալով հանդերձ՝ լուրջ, սկզբունքային ու համակարգային տարբերություններ մտցնել Սահմանադրության մեջ: Ակտիվ նախասահմանադրական բանավեճի ժամանակ բարձրացված հարցերը որոշակի փոփոխություններ են մտցրել հիմնական օրենքում: Որքան էլ զգուշավոր են ձևակերպվել մտքերի, կարծիքների, գաղափարների ազատ արտահայտման իրավունքները, այնուամենայնիվ ԼՂՀ Սահմանադրության ընդունումը փաստել է, որ ժողովրդավարական պետություն և քաղաքացիական հասարակություն կառուցելու ճանապարհին Արցախը կատարել է հերթական լուրջ քայլը՝ ամրագրելով ԼՂՀ անկախության միջազգային ճանաչմանը հասնելու ժողովրդի անկոտրում կամքը: ԼՂՀ Սահմանադրությունը պատմական կարևոր երևույթ է թե՛ ռազմաքաղաքական և թե՛ իրավական առումով: Խոսքի և արտահայտվելու ազատության սահմանադրական պաշտպանությունը ընդգծում է ժողովրդավարական արժեքները ամրագրելուն միտված ԼՂՀ դիտակետը:

Սահմանադրության մեջ ներառված չէ գրաքննության ցանկացած ձևն արգելող դրույթ, որը կարող է ուղղվել խոսքն ազատ արտահայտելու, տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատությունը սահմանափակելուն: Այս դրույթի բացակայությունը պայմանավորված է ինքնահռչակ պետության հետ, որը խոսքի ազատության իրավունքն իրականացնողի վրա նախնական գրաքննության ձևով որոշակի պարտավորություններ է դնում: Նկատենք, որ Արցախում մարդու անձնական կյանքը, պատիվն ու առողջությունը, իրավունքներն ու ազատությունները պաշտպանվում են պետության կողմից, օրենքով և արդարադատությամբ: Հիմնական օրենքով խոսքի ազատության սահմանափակումների անհրաժեշտությունը համահունչ է ինքնիշխան իրավական պետության քաղաքական սկզբունքների հետ, սակայն անտեսելու չէ գրաքննության անհամատեղելիությունը ժողովրդավարական կառավարման հետ: Ընդգծվում է, որ պետության իրավունք ունի միջամտելու խոսքի ազատությանը, եթե «դա պիտանի, անհրաժեշտ և համարժեք է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար» (հոդված 52): Նման պարագայում մամուլը հաշվի է նստում այդ պահանջների հետ, սակայն երբեմն հանդուրժողական չէ կանայական սահմանափակումների նկատմամբ, որովհետև իշխանությունները

ազատ խոսքը մշտապես վերահսկելու նպատակով դիմում են ավանդույթ դարձած միջոցների՝ ֆինանսական ճնշումներ գործադրելու միջոցով մամուլի գործունեության կասեցում, քրեական հետապնդում և ազատազրկում:

Արցախյան շարժման ակունքներից մինչև 2001թ. քաղաքական ուժերի և լրատվամիջոցների միջև հակադրվածությունը մտահոգվելու տեղիք է տվել, որովհետև հետևանքները դրսևորվել են միջադեպերով: Մամուլը բախվել է օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի զանազան խոչընդոտների, ենթարկվել ֆիզիկական ոտնձգությունների: Ռազմական գործողությունների պայմաններում օրենսդրական բազայի բացակայությունը առաջ է բերել իշխանությունների կոշտ հակազդեցություն, որի ժամանակ արձանագրվել են մամուլը ճնշելու և հետապնդելու բազմաթիվ դեպքեր: Ներքաղաքական պայքարի տարիներին ԼՂՀ կառավարությունը ազատ խոսքը գրաքննել է արդարադատության մարմինների միջոցով, ինչը հանգեցրել է լրատվադաշտից լրագրողների պարտադրված հեռացմանը: Ներկա ժամանակաշրջանում նկատելի տեղաշարժ է կատարվել երկրի օրենսդրական համակարգում, սակայն շարունակում է խոցելի մնալ մամուլի և տեղեկատվության ազատության սահմանները:

### **«Խոսքի ազատության միջազգային չափանիշները և ԼՂՀ օրենսդրությունը»**

Երկրորդ ենթագլխում ներկայացրել ենք, որ չնայած պաշտոնապես չճանաչված ԼՂՀ-ն չի հաստատել միջպետական և դրանից բխող այլ իրավահարաբերություններ, չի անդամակցում միջազգային կազմակերպություններին, հետևաբար որոշակի պարտավորություններ չի ստանձնում, սակայն հանրապետությունը բռնելով ժողովրդավարության բարեփոխումների ուղին՝ շահագրգռված է ներքին և արտաքին տեղեկատվական քաղաքականության մեջ առաջնորդվելու միջազգային գործող չափանիշներով: Միջազգային իրավունքի սկզբունքները երկրի օրենսդրական համակարգի մեջ ամրագրելով՝ ԼՂՀ օրենսդիր մարմինը գերական համարում է մարդու ազատ արտահայտվելու իրավունքը՝ որպես ի ծնե տրված անօտարելի իրավունք: Միջազգային փաստաթղթերին միանալու և միջազգայնորեն ընդունված համամարդկային արժեքները որդեգրելու մասին ԼՂՀ-ն հայտարարել է իր անկախությունը հռչակելուց հետո: Ուշագրավ է, որ քաղաքացիական իրավունքների պաշտպանության հարցերը լուծվում են ոչ միայն երկրի ներքին օրենսդրության, այլև միջազգային փաստաթղթերի, մասնավորապես՝ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի», «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրի», նրա կից արձանագրությունների, Եվրոպական դատարանի որոշումների, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի» պահանջներին համապատասխան: Ի տարբերություն ԼՂՀ օրենսդրության՝ միջազգային իրավանորմերը արդյունավետ պաշտպանություն են ապահովում արտահայտվելու ազատության իրավունքի համար և բացառում կամայական, այլընտրանքային իրավախախտումները, ներկայանում են «ամեն ինչ օրենքով և ամեն ինչ հանուն ժողովրդավարության զարգացման առաջընթացի» կարգախոսով:

Ատենախոսության մեջ ընդգծվում է «ԼՂՀ միջազգային պայմանագրերի մասին» օրենքի ընդունման փաստը: Մանրամասնորեն քննարկվում է հիշյալ օրենքը և բացահայտվում առաջադեմ դրույթները: Կարևորվում է այն, որ համամարդկային իրավունքները պաշտպանելու, քաղաքական դաշինք ստեղծելու, հաշտություն և խաղաղություն պահպանելու, ազատությունների և պարտականությունների կատարման, բարեկամություն և համագործակցություն հաստատելու, բարեգործական և մարդասիրական գործունեություն ծավալելու առաջարկություններ

րին պատրաստ են միանալ ԼԴՅ Նախագահը և ԼԴՅ կառավարությունը, անվերապահորեն կատարել քաղաքացիաիրավական պայմանագրերը: Նաև այն, որ իշխանական թևերի խախտումների վարկանիշը և ստորագրված իրավունքները վճռական դեր են խաղալու պետության իրավական համակարգում ձևավորված և համաձայնեցված օրենքների պրակտիկայում:

**«Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը»** ենթագլուխը նվիրված է մարդու և քաղաքացու տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու, տեղեկատվության ցանկացած միջոցով տարածելու սահմանադրական իրավունքի ապահովմանը և ազգային անվտանգությանը սպառնացող օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների գաղտնիության պահպանմանը: Ռազմաքաղաքական դրությունը Արցախում տեղեկատվական քաղաքականության մեջ առանձնահատուկ դերակատարություն ունի և անխուսափելի են մամուլի հրապարակումներում որոշակի վերապահումները: Տեղեկատվական սակավ ռեսուրսների առկայությունը բացասաբար են անդրադառնում արդյունավետ ժողովրդավարական հասարակություն ձևավորելուն: Նախընթաց տարիներին երկրամասում արձանագրվել են լրատվամիջոցների քանակական սահմանափակություն և պասիվություն, որոնք հետևանք են ԼԴՅ քաղաքական և տնտեսական որոշ գործոնների: Տեղեկատվական ոլորտի հիմնախնդիրներից է այն, որ լրատվաընտանիքում թափուր է անկախ և ընդդիմադիր մամուլի տեղը: Եթե տպագիր մամուլում որոշակի բազմազանություն նկատելի է, այն է՝ հանրապետական և շրջանային պաշտոնաթերթեր, նախարարությունների և գերատեսչությունների տպագիր օրգաններ, նաև հրատարակվում են կուսակցական պարբերաթերթեր, ապա էլեկտրոնային դաշտն անհամեմատ աղքատ է: Առհասարակ փակ տեղեկատվական համակարգը վնասում է պետական շինարարությանը և ձևավորվում է պարզունակ հասարակական միջավայր, որի դիմադրողականությունն արտաքին վտանգի դեպքում հասնում է նվազագույնի: Հասարակության տեղեկացվածության դերի կարևորությունը հաշվի առնելով՝ Արցախում օրակարգային է պաշտոնյաների հրապարակային գործունեությունը:

Հարկ է նշել, որ տեղեկատվական օրենսդրական դաշտի ստեղծումը համարվում է մարդկանց մյուս սահմանադրական իրավունքները գործադրելու գլխավոր նախապայման: Թեև տեղեկատվության ազատության երաշխիքներն ամրագրվել են «Տեղեկատվության ազատության մասին» ԼԴՅ օրենքում, այնուհետև երկրի սահմանադրությամբ, սակայն խնդրահարույց է հրապարակայնության սկզբունքի կիրառությունը օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործունեության մեջ: ՏՄ սկզբունքներից ելնելով՝ հրապարակայնությունը, տեղեկատվություն տնօրինողի կողմից տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը և ՏՄ սահմանափակումների սպառնիչ ցանկի սահմանում ամրացնում են լրագրողների և պետական մարմինների միջև աշխատանքների թափանցիկությունը, ինչը խթանում է որոշումների ընդունման գործընթացում հասարակության մասնակցության ընդլայնումը: Տեղեկատվական քաղաքականության մեջ համակարգված աշխատանք վարելու նպատակով վերջին շրջանում պետական մարմինների ստորաբաժանումներում ստեղծվել են մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություններ, որոնց նպատակն է ներգրավել հասարակությանը՝ ազդելու պետական որոշումների կայացմանը: Հետևելով տեղեկատվության ապահովման պատասխանատու անձանց գործելակերպին՝ քննության առարկա է պաշտոնական և արխիվային փաստաթղթերի պահպանման, դասակարգման և համակարգման աշխատանքների համրամատչելիության խնդիրը:

**«ԶԼՍ-ների գործունեությունը կարգավորող ԼԴՅ օրենքները»** ենթագլխում վերլուծության են ենթարկվում լրատվադաշտը կանոնակարգող «Ձանգվածային լրատվության մասին», «Յեռուստատեսության և ռադիոյի մասին», «Յեռահաղորդակցության մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», «Յեղի-նակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» «Գովազդի մասին», «Լեզվի մասին» օրենքները և իրավական լրացուցիչ փաստաթղթերը, որոնցում ամրագրված դրույթները իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա երաշխավորում են լրատվական գործունեություն իրականացնողների իրավունքները և ազատությունները:

Օրենսդրական բարեփոխումներով պայմանավորված՝ ԼԴՅ խորհրդարանը ընդունել է ՍՄԱ-ի նախաձեռնությամբ առաջադրած «Ձանգվածային լրատվության մասին» օրենքը և ուժը կորցրած ճանաչել «Ձանգվածային լրատվության միջոցների մասին» նախկին օրենքը: Սկստենք, որ մինչև նոր օրենքի ընդունումը ոլորտի իրավական կարգավորումը ունակ էր անուղակիորեն ազդել մամուլի բովանդակության վրա և սահմանափակել իշխանությունների ու նրանց վարած քաղաքականության վերաբերյալ ցանկացած հրապարակային քննադատություն: Այս համատեքստում և տեռախոսության մեջ մատնանշած բազմաթիվ դեպքեր վկայում են լրագրողների իրավունքների ոտնահարման մասին: Լրատվության սահմանների վերահսկողության արդյունքում դադարել են գործել տպագիր թերթեր, հետախուզվել և կալանավորվել են լրագրողներ: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե հանրապետությունում որևէ լրատվամիջոց փոքրինչ ավելի մոտ է հանրությանը և մուլցնափ իշխանություններից հեռու, ապա վերջիններս փորձում են փոխել տեղեկատվական քաղաքականությունը ու սեփական մեթոդներով այն ղեկավարել:

Նոր օրենսդրական միջավայրը թույլատրում է մամուլի իրավունքները հարգելու և պաշտպանելու անհրաժեշտությունը: Լրատվադաշտը կանոնակարգող «ԶԼ մասին» օրենքում ամրագրված է, որ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա (հոդված 4): Օրենսդրորեն ամրագրված է, որ արգելվում են գրաքննությունը, լրագրողի նկատմամբ հարկադրանքը, մասնագիտական գործունեության խոչընդոտումը և խտրականության դրսևորումները: Մեր դիտարկումները վկայում են, որ «ռազմական դրություն», «պետական գաղտնիք» հասկացությունները բացասաբար են անդրադառնում երկրում որակյալ մամուլի ստեղծման վրա: Դրանից բխող ինքնագրաքննությունը ծառայում է առանձին մարդկանց բյուրոկրատ սկզբունքներին:

Արցախի Յանրապետությունում հեռուստառադիոլրտը կարգավորող օրենսդրությունը բոլորովին նոր պատմություն ունի և հաճախ է փոփոխություններ կրում: Օրենքում պարբերաբար կատարվող փոփոխությունները արտացոլում են նաև երկրի զարգացման դինամիկան: «Յեռուստատեսության և ռադիոյի մասին» ԼԴՅ օրենքը սահմանում է դաշտը կարգավորող գործառույթները, եթեայլին հաճախությունների հրապարակային և մրցութային հատկացումը, հեռուստառադիոլրտի նկատմամբ վերահսկողությունը: Ուշագրավ է օրենքի 4-րդ հոդվածը. «ԼԴՅ-ում երաշխավորվում է հեռուստառադիոհաղորդումների ազատ ընտրության, արտադրության ու տարածման իրավունքը և արգելվում է հեռուստառադիոհաղորդումների գրաքննությունը»: Յաշվի առնելով հեռուստառադիոլրտային առանձնահատկություններն ու զարգացման միտումները՝ երկրամասում օրա-

խնդիր է հեռուստառադիոընկերությունների արտոնագրման և վերահսկողության հարցը: Սույն օրենքի համաձայն՝ հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն է, որի երեք անդամներին նշանակում է ԼՂՀ նախագահը: Մասնավոր հեռուստառադիոընկերությունների գործունեության կարգը տնօրինում է ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական համձնաժողովը, որի հինգ անդամներին նշանակում է ԼՂՀ նախագահը՝ ԼՂՀ վարչապետի ներկայացմամբ: Իսկ ԼՂՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը վկայում է. «Պետությունը երաշխավորում է հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը»: Հենվելով Հայաստանի և Արցախի լրատվադաշտի փորձագետների հիմնավորումների վրա՝ ըստ ամենայնի ռադիոյի և հեռուստատեսության ոլորտի օրենսդրությունը ենթակա է լուրջ փոփոխությունների:

**«Ընտրությունների լուսաբանման իրավական կարգավորումը»** ենթազխում վերլուծության են ենթարկվում ընտրական գործընթացների լուսաբանման օրենսդրական դրույթների առանձնահատկությունները, նախընտրական քարոզչության կարգը և ձևերը: Արժարժվում է այն գաղափարը, որ տեղեկատվական միջոցների հավասար հնարավորության պայմաններում ազատ և արդար հրապարակումները հասարակությանը իրազեկելու և ուղղորդելու նպատակ են հետապնդում: Նաև ընտրությունների ժամանակ քաղաքացիների ակտիվ մասնակցության ապահովումը սերտորեն շաղկապվում է լրագրողների ազնիվ ու պատասխանատու վարքագծի հետ:

Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության ամենավառ օրինակը ժողովրդավարությունն է, որին հասնելու կայուն համակարգը պահանջում է ընտրությունների արդար և վերահսկելի օրենսդրություն: Երկրորդը՝ իշխանության կառավարման այնպիսի մեխանիզմի ձևավորումն է, որն ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական մարմինների իրական տարանջատում և փոխադարձ վերահսկողություն ու պատասխանատվություն: Միայն այդպիսի միջավայրում քաղաքացին իր իրավունքների և լրագրությունների շրջանակում զգում է իրեն ապահով և պատասխանատվություն է կրում երկրի նկատմամբ իր պարտավորությունների համար: Ժողովրդավարական մասնավորությունը Արցախում մասամբ են ձևավորվել (օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով), հետևաբար, ազատ մամուլ ունենալու համար հարկ է խորհել դրա իրավական և քաղաքական պայմանների ստեղծման մասին:

Հանրապետությունում խնդրահարույց է ընտրական քարոզարշավներում իշխանամետ մամուլի ներկայացուցիչների ինքնագրաքննության երևույթը, որն ինքնարտահայտման սպառնալիքներ է երևան հանում: Ինչպես փաստում են լրագրողական միջադեպերը, պետական պաշտոնատար անձինք լրագրողների նկատմամբ ճնշում գործադրելուն զուգահեռ՝ պաշտոնական լրատվամիջոցներով սահմանափակում են քաղաքացիների ընտրական իրավունքի ազատությունները: Ընտրությունների ժամանակ իշխանության կողմից չարաշահումները նվազեցնելու և լրագրողների նկատմամբ մեքենայությունները արգելելու նպատակով հանրապետությունում ստեղծվել է արդիական օրենսդրություն, որը, ինչպես փորձն է ցույց տալիս, գերազանցապես ունի գաղափարական բնույթ:

Ատենախոսության առաջին գլխի վեցերորդ բաժինը նվիրված է **«Մարդու պատվի և արժանապատվության պաշտպանությանը»**: ԼՂՀ-ում երաշխավորվելով արտահայտման և խոսքի ազատությունը՝ սահմանադրական դրույթները միաժամանակ պաշտպանում են անհատի պատիվը, արժանապատվությունը և մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը: Պաշտպանության նկատառումով երկրում

գործում է քաղաքացիաիրավական և քրեաիրավական կարգ: Անդրադառնալով քաղաքացիական և քրեական օրենսդրության նախապատմությանը՝ նշվում է, որ մինչև 2001թ. զանազան և բազմաթիվ փոփոխություններով ԼՂՀ տարածքում գործել են դեռևս 1961թ. հայկական ԽՍՀ-ում ընդունված Քաղաքացիական և Քրեական օրենսգրքերը, որոնք համապատասխանել են սոցիալիստական համակարգին և կրել են հիմնականում դեկլարատիվ բնույթ: Նոր շուկայական հարաբերություններով պայմանավորված՝ համակարգում ծագող քաղաքացիական իրավահարաբերությունների գործընթացն ապահովելու նպատակով ԼՂՀ խորհրդարանն առաջարկել է կիրառել Հայաստանում ընդունված Քաղաքացիական օրենսկան դաշտի ընդհանրությունը՝ գործողության մեջ է դրվել Քրեական օրենսգիրքը: Սույն ենթագլխում ընդգծվում է, որ ժամանակակից ԼՂՀ և ՀՀ օրենսդրական ընդհանուր դաշտը հարուցում է նույն կարգի խնդիրները և իրավական տիրույթում արտահայտում է հետազոտողների համարժեք կարծիքները: Այս հայեցակետից հետազոտությունը գրեթե նույնական է և միայն «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» քաղաքական կարգավիճակով պայմանավորված՝ որոշ առանձնահատկություններ է առաջացնում: Արցախում պետական պաշտոնյաներին կամ մարմիններին անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու պարագայում լրագրողների դեմ կիրառվում են քաղաքական ազդեցիկ լծակներ, որոնք բացասաբար են անդրադառնում մամուլի ազատության վրա: Ընդ որում՝ ԼՂՀ Քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածը պետական իշխանության ներկայացուցիչներին առավել մեծ պաշտպանությամբ են ապահովում, ինչը լրագրողներին ակաբեկելու և մասնագիտական գործունեությունը սահմանափակելու նպատակ է հետապնդում: Աշխատանքում մանրամասնորեն ներկայացվում է հանրապետությունում նախադեպային և հրապարակային արձագանք ստացած «10-րդ նահանգ» թերթի լրագրող Վ. Աղաջանյանի ազատագրկման դատապարտելու վերաբերյալ քրեական գործը:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն գաղափարին, որ մամուլի ազատությունը ճնշելու նպատակով քաղաքացիաիրավական և քրեաիրավական պատասխանատվության մեթոդները նվազում են ՁԼՍ-ների ինքնակարգավորման մեխանիզմների կայացման արդյունքում:

**«Լրատվամիջոցների արտադատական և դատական պաշտպանությունը»** ենթագլխում անդրադարձել ենք տեղական մամուլի՝ որպես հասարակական կրոնորագույն ինստիտուտներից մեկի պաշտպանության գերխնդրին, լրագրողի շահերի պաշտպանության արդյունավետ միջոցների ընտրությանը և միջազգային փորձի ուսումնասիրությանը: Խոսքի ազատության իրավունքը ոտնահարելու և լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու պարագայում ԼՂՀ-ում գործող քրեական, քաղաքացիական ու վարչական իրավադրույթները սահմանում են պատասխանատվություն: Իրողությունները վկայում են, որ հանրապետության մասշտաբով լրագրողական շահերը պաշտպանելու նպատակով նախադեպ չի գրանցվել՝ կապված հավատարմագրման, լրատվամիջոցի գործունեության դադարեցման, տեղեկատվության ազատության սահմանափակման հետ:

Մեր կողմից անցկացված հարցումներից պարզեցինք, որ վերջին տարիներին Արցախում առավել հրատապ են դարձել մասնագիտական իրավունքների ոտնահարման դեպքում լրագրողների անտարբեր վերաբերմունքն ու ինքնամեկուսացումը: Խնդիրը դիտարկենք մեր տեսանկյունից՝ համադրելով տեղեկան մամուլում հրապարակի վրա հայտնված սոցիոլոգիական հետազոտությունները, դի-

տարկման արդյունքները, հետազոտողների կարծիքները: Մամուլի գործունեության հաջողությունները որոշելու հարցում վճռական դեր է խաղում օրենքի գերակայության սկզբունքի պաշտպանությունը: Մամուլը չի կարող արդյունավետ գործել, եթե իշխանությունները չեն պարտադրում համընդհանուր կիրառության օրենքները կամ դա անում են կամայական ձևով՝ կամայականությունները շաղկապելով երկրի քաղաքական ու տնտեսական կացության հետ:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԶԼՍ-ՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԼՂԳ-ՈՒՄ

Ատենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից, որտեղ քննության են առնվում ինքնակարգավորման մեխանիզմները, նրանց տեղն ու դերը ԶԼՍ-ների համակարգում: Ինքնակարգավորման միջոցները ծառայում են մամուլի ազատության պաշտպանության նպատակին՝ սահմանափակող իրավական ակտերից և պետական վերահսկողությունից խուսափելու համար: Մամուլի ազատության պաշտպանության վերաբերյալ ուշագրավ տեսակետ է հայտնել հետազոտողներից մեկը. «Լրագրողների խոսքի ազատության սահմանները որոշվում են նրա պրոֆեսիոնալիզմով, որի բաղկացուցիչ մասերն են ազատությունը և պատասխանատվությունը»<sup>16</sup>: Արցախում մամուլի ազատությունն ու անկախությունը դեռևս խնդրահարույց են: Մամուլի գոյությանը վտանգող նյութական և կազմակերպական խնդիրները, քնակչության սակավաթվությունը և գնողակառույցի ցածր մակարդակը հետին պլան են մղում մասնագիտական բարոյական չափանիշները: Շարունակական «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրադրությունում մամուլի ազատությունը կարող է հանրապետության ներքին քաղաքականության լարվածության առիթ հանդիսանալ: Արտաքին տեղեկատվական քաղաքականության և ազգային անվտանգության փոխհարաբերությամբ պայմանավորված՝ երկրի ուժային կառույցները մեծ ազդեցություն են ունենում լրատվամիջոցների գործունեության վրա և հաճախ մեղադրում են այն լրագրողներին, որոնք հասարակական կարծիք են ձևավորում երկրի ներքին արատների մասին:

Արցախի տեղեկատվական դաշտը իրավական կարգավորման և ինքնակարգավորման ներդաշնակության անհրաժեշտություն ունի: Տեղական մամուլում դեռևս հրատապ չեն հասարակական շահն ու թիկական չափանիշները: Լրագրողները շարունակում են որդեգրել լրատվամիջոցի ղեկավարի ուղեգիծը, որի հետ գոյություն ունեն ֆինանսական փոխշահավետ պարտավորություններ: Մինչդեռ կարևոր է արհեստավարությունը բարձրացնելու, հասարակության վստահությունը նվաճելու, ապատեղեկատվական հրապարակումներից քաղաքացիներին պաշտպանելու գործառնություններով պայմանավորել լրատվադաշտը:

Առաջին ենթագլխում՝ **«Ինքնակարգավորման համակարգի հիմնախնդիրները և առանձնահատկությունները»**, ներկայացնում ենք արցախյան ԶԼՍ-ների ինքնակարգավորման կառույցների գործունեությունը և տեղեկատվական դաշտում առկա վիճահարույց հարցերը: Հանրապետությունում մամուլի գործունեության գլխավոր թիկական հիմնախնդիրը ուղղորդված և վերահսկվող լրատվությունն է, որը փոխանցվել է խորհրդային համակարգից: Արցախի իշխանություն-

<sup>16</sup> 21<sup>st</sup> century challenges for the media in the South Caucasus (First South Caucasus media Conference Tbilisi, 25-26 october 2004), OSCE the representative on freedom of the media, Vienna, 2005, p. 75.



ներն իրենց քաղաքական ծրագրերը օգտագործում են քարոզչության համար՝ ոչ հաճախ տեղեկացնելու նպատակով: Հիշյալ խնդրին նպաստում են պետական և կառավարամետ հրատարակությունները, որոնք հասարակության շրջանում առաջացնում են ոչ բավականաչափ վստահություն և բացասաբար անդրադառնում ՁԼՄ-ի հեղինակության վրա: Ձուգահեռաբար, ավելի հրատապ է դառնում ինքնագրաքննության պայմաններում գոյատևելու խնդիրը, որտեղ լրագրողները գերադասում են պետական պաշտոնյաների թույլ տված միջավների մասին չգրել ոչ միայն նրա համար, որ չեն կամենում հարաբերությունները վտանգի ենթարկել, այլ նաև չեն ցանկանում հարվածի տակ դնել բարեկամների, հարազատների և ընկերների կյանքն ու գործունեությունը: Արդյունքում երկրի քաղաքացիները գերադասում են տեղեկանալ հայաստանյան կամ այլ աղբյուրներից, նախընտրում են ունկնդրել զվարճալի-ժամանցային, քան հասարակական, քաղաքական բնույթի հաղորդումներ:

Դասական առումով **ինքնակարգավորման գործառույթի** ելությունն այն է, որ լրատվահամակարգը՝ իբրև սոցիալական պատասխանատվությամբ օժտված կառույց, պաշտպանում է իր և քաղաքացիների տեղեկատվական իրավունքները: Եթե ինքնակարգավորիչ մեխանիզմները կիրառություն չեն գտնում լրագրողական միջավայրում, ապա վաղ է խոսել հասարակության կողմից վերահսկողության և վստահելիության մասին: Նման գործառույթի բացակայությունն ունեցող տեղեկատվական դաշտը չի կարող աչքի ընկնել **անվտանգությամբ**, որովհետև ինքնակարգավորման կառույցի անդամ լրատվամիջոցը, անտեսելով մասնագիտական սկզբունքները, գրկվում է մասնագիտական համերաշխությունից և գործընկերների աջակցությունից: Բացի այդ՝ ինքնակարգավորման մեխանիզմներն իրականացնում են **մասնագիտական արժանապատվության պահպանման և կրթական** գործառույթներ: Հավատարմությունը մասնագիտական վարքականոնին սերտորեն շաղկապված է էթիկայի սկզբունքների յուրացման հետ, որոնք խթանում են լրատվադաշտում առկա խնդիրների լուծմանը: Միջազգային չափանիշներով որակյալ կադրերի ուսուցումը և հայրենական տեղեկատվության բարձրակարգ մատուցումը կարող են էապես օժանդակել մասնագիտական կայացմանը: **Տնտեսական գործառույթով** պայմանավորված՝ որակյալ տեղեկատվական արտադրանք ստեղծելու տեխնոլոգիաների սահմանափակությունը ազդում է շուկայական փոխշահավետ համագործակցությանը: Եթե ապրանքը երաշխավորված չէ որակական հատկանիշներով, ապա պահանջարկի առումով գնորդների շրջանակը նեղ է լինում: Հասարակական թույլ պահանջարկի պատճառով լրատվամիջոցը չի դիմանում ֆինանսական ծանրությանը և կորցնում է բազում հավանական ընթերցողների և ունկնդիրների՝ դառնալով տեղեկատվության ոչ վստահելի ու ոչ արժանահավատ աղբյուր:

Արցախում կազմավորված լրատվամիջոցների ու լրագրողական կազմակերպությունների խորհուրդը և ընդունված էթիկայի վարքականոնը ինքնօրինաբար ի գործն չեն ապահովել մասնագիտական գործառույթների իրականացման բարձր որակ և հանդես գալ իբրև պետության ու հասարակության վրա ներգործուն օղակ:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ բաժինը նվիրված է **«էթիկական հիմնական սկզբունքներին և խախտումներին»**: Հետևելով հանրապետության լրատվադաշտի էթիկական վարքագծին՝ վարքականոնով նախատեսված նորմերը հիմնականում չեն պահպանվել և մանուլում նկատված խախտումները բացառելու ծրագրեր չեն ուրվագծվել: Էթիկական խախտումները, որ ի հայտ են բերվել համեմատաբար մեծ լսարան ունեցող լրատվամիջոցներում, վկայում են կանո-

նագրի դրույթների նկատմամբ լրագրողների անփույթ և պասիվ վերաբերմունքի մասին:

Մատնանշվում է, որ ընտրական զարգացումներում արցախյան ներքաղաքական իրողությունները նպաստում են լրատվամիջոցների միջև լարվածության աճին, էթիկական խախտումներին և ոչ կոռեկտ դրսևորումներին: Առավել հաճախ խախտվում է մասնագիտական համերաշխության սկզբունքը, ինչի հետևանքով գրանցվում են անձնական բնույթի մեղադրանքներ, վիրավորանքներ և նախընտրական քարոզչության շրջանում անհավասար հիմունքներով իրապարակումներ: Տեղական լրատվամիջոցներից ոչ մեկը չունի էթիկայի կանոնագիր, և յուրաքանչ-յուրն աշխատում է՝ առաջնորդվելով սեփական խղճով, պատկերացումներով և սկզբունքներով: Ներկա ժամանակաշրջանում մամուլը մեծ մասամբ քաղաքական խմբակային շահեր է արտահայտում և պատրաստ չէ հիմք ընդունել համընդհանուր սկզբունքները: Աղբյուրների ոչ պատշաճ վկայակոչումը կամ նրա բացակայությունը, շահերի բախումը, մեղադրանքի, վիրավորանքի և զրպարտության դրսևորումները, փաստերի միտումնավոր կեղծումը, անձնական կարծիքի վրա հիմնված ոչ ստույգ տեղեկությունները թույլ են տալիս փաստելու, որ առանձին դեպքերում արցախյան լրատվադաշտում ինքնակարգավորման չափորոշիչները տեղի են տալիս: Տեղեկատվական հիմնախնդիրներին համահունչ արդիական են մնում ՁԼՄ-ների ինքնակարգավորման մեխանիզմների արմատավորումը և անկախ մամուլի կայացումը:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ուսումնասիրության արդյունքները հանգեցնում են ստորև շարադրված եզրակացություններին, որոնք համադրված են հետազոտության խնդիրներին և պաշտպանության ներկայացված դրույթներին համապատասխան.

1. Ըստ ժողովրդավարական գործընթացներով ձևավորված արժեքների՝ ազգային օրենսդրությունը և բազմաթիվ իրավական ակտեր որոշում են այն պայմանները, որոնց դեպքում քաղաքացիները և պետական կամ հանրային կառույցները կարող են տեղեկանալ խոսքի և տեղեկատվության ազատության հիմնական իրավունքներին: Երկրի Սահմանադրությամբ հռչակվում է, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է»: Սահմանադրությամբ ԼՂՀ-ն ամրագրում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես նոր ժամանակներին համահունչ աշխարհայեցողություն: ՁԼՄ-ների գործունեությունը կարգավորող ԼՂՅ օրենքները արգելում են գրաքննությունը: Լրագրողներին հնարավորություն է ընձեռնվում իրագործել անցումային շրջանում գտնվող, պաշտոնապես չճանաչված պետության ազգային նպատակները:

2. ԼՂՀ ռազմաքաղաքական իրավիճակը և պետության անվտանգության գործոնն ազդում են ՁԼՄ կարգավորման մեխանիզմների կիրառությանը: Արտաքին և ներքին տեղեկատվական քաղաքականության մեջ թույլատրելի սահմանները շարունակում են անորոշ մնալ: ՁԼՄ-ների իրավական կարգավորման մեխանիզմներն ունեն խորհրդանշական բնույթ և իրավակիրառ պրակտիկան նկատելիորեն զիջում է: Այդ առումով օրինականության սահմաններում պետական շահերին վնասող տեղեկատվությունը հստակ սահմանազատելու խնդիր է առաջանում:

3. Արցախում իրականացվող ՁԼՄ իրավական բարեփոխումների ներկա փուլին բնորոշ խոչընդոտներից է լրագրողական մտածելակերպի ավանդական դիրքորոշումը: Դա բացատրվում է լրատվադաշտի անբավարար ձևավորմամբ ու

թերի գործելակերպով: Գործող լրատվամիջոցները ներկայանում են որպես իշխանական շահեր հետապնդող միավորումներ, քան իբրև հասարակական շահերն արտահայտող մարմիններ, իսկ մատուցվող լրատվությունը միատարր է ու քարոզչական բնույթի:

4. Հանրության մեջ նկատելի է քաղաքականության և պաշտոնական մամուլի գործունեության նկատմամբ հետաքրքրության անկում: Դրան նպաստում է սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում մարդկանց ճնշվածությունը՝ հանգեցնելով պասիվության: Գործադիր և դատական իշխանության նկատմամբ ձևավորվել է անվստահության մթնոլորտ: Օրենսդրական գործընթացները արգելակվում են դատաիրավական համակարգում, ինչի պատճառով քաղաքացիները և մասնագիտական խմբերը խուսափում են անօրինակամությունների դեպքում օգտվել դատական և արտադատական պաշտպանության մեթոդներից:

5. Արցախյան լրատվադաշտում առավել դանդաղ է ձևավորվում անկախ մամուլը, որի պատճառներից է քաղաքական մեկուսացվածությունը: Ֆինանսական դժվար կացությունը և գովազդային դաշտի բացակայությունը խոչընդոտում են ազատ և բազմակարծիք լրատվության միջոցների առկայությունը: Լրատվադաշտը հարուստ չէ և ներկա տեսքով ու բնույթով չի համապատասխանում 21-րդ դարի տեղեկատվական չափանիշներին, առկա մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտ միջոցներին:

6. Իրավակիրառ պրակտիկայում տեղեկատվության մատչելիության գործառույթը չի խթանում պետական ծառայության թափանցիկությանը ու բաց լինելուն, չի ներգրավում հասարակությանը՝ ազդելու պետական որոշումների կայացմանը: Տեղեկատվության ազատության օրինակամությունը երևակվում է իշխանական մարմինների կողմից. պաշտոնյաները անձնական և այլ շահերից ելնելով՝ խուսափում են մամուլին որոշակի տեղեկության տրամադրումից, ինչն իր հերթին խանգարում է սխալ որոշումը, ձեռնարկումը, անօրինակամությունը ժամանակին կանխելուն:

7. Տեղական մամուլը ակտիվություն չի ցուցաբերում տեղեկատվություն ստանալու և խոսքի ազատության իրավունքների պաշտպանության հարցերում, մեծմասամբ չի տիրապետում օրենսդրական գիտելիքների, առավել հաճախ օգտագործում է բարեկամական, անձնական կապերը, քան իրավական գիտելիքները: Լրագրողները չեն վստահում օրենքի ուժին և դատական ատյանների գործունեությանը, առաջարկություններով և բողոքներով հանդես չեն գալիս իրավական փաստաթղթերի, օրինագծերի ստեղծման և ընդունման գործընթացներում, հետևողականություն չեն ցուցաբերում տեղեկատվական իրավունքների անօրինական սահմանափակման դեպքերում, հրապարակային քննարկումներ չեն կազմակերպում մասնագիտական նեղ շրջանակներում:

8. Զրպարտության և վիրավորանքի քրեաիրավական կարգավորումը խոչընդոտներ է ստեղծում խոսքի ազատության պաշտպանության համար: Քրեական պատասխանատվության համակարգը բարոյապես ճնշում է լրագրողներին և ինքնազորաբնույթյան առիթ դառնում: Պետական պաշտոնյաները հանդուրժողականություն չեն ցուցաբերում իրենց հասցեին հնչած քննադատության նկատմամբ և օգտագործում են իրավական, տնտեսական լծակները՝ սահմանափակելով ազատ մամուլի գործունեությունը:

9. Չմայած ընտրական օրենսգիրքը նվազեցնում է իշխանության չարաչափումները նախընտրական քարոզչության ժամանակ, սակայն պաշտոնական մամուլը չի ապահովում անաչառ ու ազնիվ լուսաբանումներ: Հասարակական կարծիք ձևավորող պաշտոնական լրատվամիջոցները լայն հնարավորությունները

օգտագործում են հովանավորներին ծառայելու համար, բայց ոչ հասարակական շահերին, ինչն էլ նպաստում է հասարակություն-իշխանություն-լրագրողական հանրություն կապողական անվաստահության մթնոլորտի ձևավորմանը:

10. ԼՂՀ լրատվադաշտի հրատապ խնդիրներից են՝ մամուլի ինքնակարգավորման մեխանիզմների անկիրառելիությունը և հասարակության առջև պատասխանատվության բացակայությունը: Քաղաքական իրողությունները, բանավեճերն ու ինտրիգները որոշ առումով ետին պլան են մղում բարոյական-մասնագիտական համերաշխությունը: Նպատակահարմար է հիմնել ՁԼՄ-ի գործունեության վերլուծության կենտրոն կամ վերահսկող Մարմին, որի միջամտությունը պահանջված կլինի լրագրողների կողմից, կֆինանսավորվի հասարակական հիմունքներով և հաղորդակցության ինտերակտիվ ուղիներ կստեղծի համակարգչային ցանցերում:

11. Մամուլի պատասխանատվությունը որոշիչ դեր ունի տեղեկատվական խնդիրների լուծման, քաղաքացիական իրավունքների և ազատությունների պաշտպանության համատեքստում, որը պարտավորեցնում է լրագրողին պայքարել իրավագիտակցությամբ, եռանդով, անմնացորդ նվիրումով և պատշաճ կազմակերպվածությամբ:

## **ԱՈՍՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Ժողովրդավարական գաղափարների իրագործման համար անհրաժեշտ է մեծամասշտաբ հետազոտություններ իրականացնել զանգվածային լրատվության դաշտում և կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն փոխանակել մասնագիտական շրջանակներում ու հասարակական կառույցներում: Պետության և իշխանությունների վերաբերյալ հասարակական կարծիքի ընկալումներում հարկ է ձերբազատվել պատմականորեն ձևավորված կարծրատիպերից և խորհրդային ավանդույթներից:

2. Անհրաժեշտ է իրավական և քաղաքական գիտակցության բարձրացման, քաղաքական մշակույթի արմատավորման ու զարգացման ճանապարհով հասնել այն բանի գիտակցմանը որ պետությունը հասարակության կողմից ձևավորվող կառույց է և պետք է ծառայի հասարակությանը: Որպեսզի պետական կառույցները ծառայեն բոլորի շահերին, հարկավոր է մամուլի և քաղաքացիների աշխույժ գործունեություն, հասարակական պատվեր, նաև ճնշումներ և ներգործություն:

3. Անհրաժեշտ է մշակել իրավական գիտելիքների ուսուցման ծրագրեր և պաշտպանել համամարդկային-ազատական արժեքները՝ մամուլը դիտարկելով որպես քաղաքացիական հասարակության շարժիչ ուժ: Արտահայտվելու ազատության իրավական մեխանիզմների մասին հարկ է դասընթացներ, սեմինարներ, թրենինգներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ, բանավեճեր կազմակերպել հասարակական քաղաքական օղակներում և վերջիններիս մղել աջակցելու լրագրողներին: Կատարված աշխատանքների արդյունքները հրապարակել հասարակության լայն զանգվածների համար Իրազեկ հասարակություն ունենալու նպատակով անհրաժեշտ է համագործակցություն ապահովել կառավարության, մամուլի, կրթական ու գիտական օջախների, լրագրության բաժնի ուսանողների և մասնագիտական այլ խմբերի միջև:

4. Հարկ է ապահովել ազատ և բազմակարծիք մամուլի առկայությունը, բացառել լրատվադաշտում ավանդույթ դարձած պետական վերահսկողությունը՝ այն փոխարինելով հասարակության հետևողականությամբ: Լրատվական գործունեությունը կանոնակարգող իրավական նորմերի կիրառության համար ներգրա-

վել քաղաքացիական ինստիտուտներին և ուղղորդել կազմակերպչական, կարգավորող-համախմբող, վերահսկող գործառույթների իրականացումը:

5. Անհրաժեշտ է փոփոխություններ մտցնել «Ռազմական դրության մասին» օրենքի կիրառության մեջ և նրա հետ կապված հրամանագրերում, որոնք սահմանափակում են խոսքի ազատության, ցույցեր և հանրահավաքներ կազմակերպելու իրավունքները: Կանոնակարգված այդ օրենքը նպաստում է տեղեկատվական դաշտում ինքնագրաքննությանը և վնասում Արցախի ազատականացման գործընթացին: Առաջարկում ենք հետևողական լինել ԼՂՀ Սահմանադրությամբ գրաքննությունն արգելելու և մամուլի ազատությունը երաշխավորելու գործընթացում:

6. Անհրաժեշտ է թափանցիկ դարձնել պետական և հանրային նշանակության մարմինների գործունեությունը, նպաստավոր պայմաններ ստեղծել հանրային, ընդդիմադիր լրատվամիջոցների անխոչընդոտ գործունեության համար և բացառել ազգակցական ու բարեկամական սերտ կապերի արդյունքում ի հայտ եկած կողմնապահ դրսևորումները: Պետական մարմիններում ստեղծել ամբողջական տեղեկատվության տրամադրման բազա (տպագիր կամ օնլայն ձևով, պատասխանում մարմնի օգնությամբ):

7. Առաջարկում ենք ստեղծել տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառման մանրագին ռազմավարություն: Իրավասու պետական անձանց բացատրել օրենքից օգտվելու կանոնները և տեղեկատվության տրամադրման կամայական մերժումների դեպքում պատասխանատվության միջոցներ կիրառել՝ պաշտպանելով մամուլի իրավունքները և ազատությունները: Դատական համակարգի հեղինակությունը վերականգնելու համար հարկ է օրենսդիր և գործադիր իշխանության ազդեցության լծակներից ձերբազատվել և արտահայտման ազատության սահմանափակումները պայմանավորել օրինական նպատակով ազգային անվտանգության և անձնական անհրաժեշտ իրավունքների պաշտպանության նկատառումներով: Յետաքննելով լրագրողների տեղեկատվությունն ստանալու իրավունքը խոչընդոտելու դեպքերը՝ ստեղծել բողոքարկման, վեճերի լուծման համակարգ և դիտարկել միջազգային ու հայաստանյան փորձը: Յարկ է լրագրողների իրավունքների ոտնահարման դեպքերը և անօրինական խախտումները զետեղել համացանցում և ուղղորդել դեպի իշխանությունները՝ արդյունավետ աշխատանքային ոճ գործառնելու նպատակով:

8. Լրատվական դաշտում ստեղծել ՁԼՄ-ների ինքնակարգավորման մեխանիզմների կիրառման ռազմավարություն, որը կպաշտպանի լրագրողներին ֆիզիկական և բարոյական ոտնձգություններից: Ինքնակարգավորման միջոցները անհրաժեշտ է արդյունավետ կիրառել և սահմանափակել քաղաքացիական ու քրեական հետապնդումները: Լրատվադաշտի ներկայացուցիչների ուժը միավորել ինքնակարգավորման համակարգի շուրջ և նվազագույնի հասցնել դատական համակարգի միջամտությունը:

9. Ապահովել ինքնակարգավորման գործընթացների թափանցիկություն և նպաստել հասարակության մեջ «ընթերցողների ներկայացուցիչ» հասկացության ընկալմանը: Յնարավորություն տալ քաղաքացուն ստուգելու լրատվամիջոցի աշխատանքի որակը, ճանաչել բարոյական նկարագիրը, ստուգել վարքականոնի առկայությունը խմբագրությունում և աշխատակիցների կողմից կիրառությունը: Քաղաքացիական հասարակությանը վերապահել պետական չինովնիկին, լրատվամիջոցին կամ լրագրողին պատասխանատվության ենթարկելու նախաձեռնությունը:

10. Առաջարկում ենք խթանել Արցախում մամուլի խորհրդի և էթիկական վարքականոցի հաստատագրումը, զորացնել խորհրդի կողմից մամուլի նկատմամբ վերահսկողությունը, լրագրողական համերաշխության միացյալ ուժերով ի սպառ վերացնել լրագրողների նկատմամբ խտրականության դեպքերը: Խորհրդի պարտականությունների մեջ մտցնել ընթերցողների և հեռուստադիտողների բողոքների դիտարկումը, կարծիքների, գովասանքի, քննադատության հրապարակումը:

11. ՁԼՄ-ների ինքնակարգավորման և իրավական կարգավորման հնստիտուտների նպատակային ծրագրերի իրականացման համար ակտիվ համագործակցություն նախաձեռնել արտասահմանյան գործընկերների հետ և վերապատրաստման հնարավորություններ ընձեռել երիտասարդ մասնագետներին: ՁԼՄ-ների ինքնակարգավորման և կարգավորման ոլորտներում կազմակերպել ամենամյա մրցանակաբաշխություն՝ խթանելով մասնագիտական որակավորումը:

12. Անհրաժեշտ է Արցախի համալսարանների լրագրության բաժիններում ուժեղացնել ՁԼՄ-ների ինքնակարգավորման և կարգավորման մեխանիզմների վերաբերյալ գիտելիքների ընդգրկում և բազմակողմանի ուսուցումը: Նպատակահարմար է լրագրության բաժիններում որպես դասախոս և լրատվամիջոցներում աշխատանքի ընդունել խելացի կադրերի, քանի որ ՁԼՄ-ների կադրային քաղաքականությունը կարևոր ռազմավարական գործիք է արհեստավարժությունը խթանելու համար:

### **Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. **Մարդյան Գ.**, Ընտրությունների լուսաբանման իրավական կարգավորումը ԼՂՀ-ում // ԱրՊՀ, Միջազգային գիտաժողովի նյութեր նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, Պրակ 1: -Ստ., 2009, էջ 285-287:

2. **Մարդյան Գ.**, Տեղեկատվության ազատության երաշխիքները // ԱրՊՀ Գիտական տեղեկագիր: -Ստ., 2009, թիվ 2 (15), էջ 84-88:

3. **Մարդյան Գ.**, ԼՂՀ հիմնական օրենքի դժվար ծնունդը // Օրենք և իրականություն իրավաբանական գիտահանրամատչելի հանդես: -Եր., 2009, թիվ 9 (167), էջ 16-18:

4. **Մարդյան Գ.**, Խոսքի ազատության միջազգային չափանիշները և ԼՂՀ օրենսդրությունը // Օրենք և իրականություն իրավաբանական գիտահանրամատչելի հանդես: -Եր., 2009, թիվ 11 (169), էջ 30-32:

## Мардян Гоар Сергеевна

### “Законодательное регулирование и саморегулирование СМИ в НКР”

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 01. 06. – “Журналистика”.

Защита состоится 5 декабря 2012, в 14<sup>30</sup> часов на заседании специализированного совета ВАК 012, действующего при ЕГУ, по адресу г. Ереван, ул. Хачатура Абовяна 52/А, ЕГУ, корпус филологического факультета, аудитория 202.

### Р е з ю м е

Диссертация посвящена законодательному регулированию и саморегулированию СМИ Нагорно-Карабахской Республики. Армянская журналистика со своими закономерностями и особенностями прошла на протяжении веков длинный и плодотворный путь, изначально участвуя в судьбе, доставшейся армянскому народу. Будучи самостоятельной познавательной ценностью, она в продолжение лет служила сверхзадаче защиты общечеловеческих информационных прав и свобод. В развитии многовековой армянской журналистики своим своеобразием отличается также информационное поле восточной части армянского края – Арцаха.

**В Введении** обосновываются актуальность темы, научная новизна и представленные к защите основные положения, их теоретическое и практическое значение, определяются объект и предмет исследования, представляется гипотеза, формулируются цель и задачи исследования.

«**Механизмы законодательного регулирования СМИ**» состоят из семи подразделов, где рассматриваются конституционные гарантии свободы слова, особенности национального и международного правового регулирования свободы слова, правовые положения о свободе информации, достижения законодательной сферы, регулирующей печатное и электронное информационное поле, защита прав журналистов в избирательных процессах, случаи попраения и злоупотребления свободой слова, методы ответственности и демократические преобразования.

Первый подраздел мы назвали «**Конституционное регулирование свободы слова**», в котором остановились на истоках правопорядка на территории исторического Арцаха, последствиях влияния чужого политико-правового поля, основных положениях концепции свободы слова и выражения в деле государственного строительства НКР.

Во втором подразделе «**Международные нормы свободы слова и законодательство НКР**» мы представили принципы международного права, закрепив которые в законодательной системе страны, законодательный орган НКР констатировал верховенство права человека на свободное выражение мнения как данного от рождения неотъемлемого права. В стране приоритетным предусловием является решение вопросов защиты гражданских прав не только внутренним законодательством страны, но и в соответствии с требованиями международных документов, в частности, европейской Конвенции о защите прав человека и основных свобод, протоколов к ней, решений Евросуда и принятого со стороны Генеральной Ассамблеи ООН пакта о гражданских и политических правах.

Подраздел **«Правовое регулирование свободы информации»** посвящен обеспечению конституционного права человека и гражданина на поиск и получение информации и идей, распространения информации любым способом и сохранению тайны установленных законодательством сведений, угрожающих национальной безопасности.

В подразделе **«Законы НКР, регулирующие деятельность СМИ»** подвергаются анализу законы «О массовой информации», «О телевидении и радио» и дополнительные правовые документы, затрагиваются законодательные реформы, механизмы защиты прав журналистов и ответственности.

В подразделе **«Правовое регулирование освещения выборов»** анализируются особенности законодательных положений освещения избирательных процессов, порядков и формы предвыборной агитации.

В подразделе **«Защита чести и достоинства человека»** мы представили гражданско-правовой механизм защиты чести, достоинства, неприкосновенности частной жизни, особенности уголовно-правового преследования за клевету и оскорбление.

В подразделе **«Внесудебная и судебная защита средств массовой информации»** мы остановились на выборе эффективных средств правовой защиты журналиста в Арцахе, изучении международного опыта и сверхзадаче по защите прессы как одного из важнейших общественных институтов.

Вторая глава диссертации **«Механизмы саморегулирования СМИ в НКР»** состоит из двух подразделов, где детально рассматривается вопрос гармонии правового регулирования и саморегулирования информационного поля. В первом подразделе **«Проблемы и особенности системы саморегулирования»** представляется деятельность сформированного в Арцахе Совета средств массовой информации и журналистских организаций, предпосылки для продуктивной и профессиональной журналистики. С учетом существующих в информационном поле проблем становится очевидным, что без свободы выражения не может быть общественной свободы, которая вместе с политической независимостью в равной степени определяет эффективность реформ в стране.

В подразделе **«Основные этические принципы и нарушения»** подвергается анализу этическая линия поведения СМИ края. Ненадлежащая ссылка на источники или же ее отсутствие, столкновение интересов, обвинения, проявления оскорблений и клеветы, преднамеренное искажение фактов, недостоверные сведения, основанные на личном мнении, позволяют констатировать, что в арцахском журналистском поле критерии саморегулирования в отдельных случаях уступают. Вкупе с информационными проблемами остаются актуальными укоренение механизмов саморегулирования СМИ и становление независимой прессы.

В заключении излагаются основные выводы, полученные в ходе исследования темы.

В конце диссертации прилагается список использованной литературы.



Gohar S. Mardiyani

**"Legislative regulation and the self regulation of the Mass Media in NKR"**

Philology PhD thesis, specialty 10.01.06 "Journalism".

Defense day: 5 December, 2010, 14<sup>30</sup> pm at the session of the VAK Specialized Council (High Attestation Commission) 012 under the Yerevan State University.

Address:

Yerevan, 52/A Abovyan str., YSU, Faculty of Philology, room N 202.

**RESUME**

The present dissertation paper is devoted to the legislative regulation and self-regulation of the mass media in the Nagorno-Karabakh Republic. Armenian media has had a long and prolific life for centuries with its national regularities and peculiarities originally taking part in the fate of the Armenians. Being a cognitive independent value its ultimate priority has been to protect universal information rights and freedoms for years. The media of Artsakh, the eastern part of the Armenian Highland, occupies a special place in the centuries-old history of the development of the Armenian journalism with its uniqueness.

The introduction gives bases for the innovation, scientific modernity of the theme, its principal questions and their theoretical and practical significance. It also points out the object and the subject of the research, introduces the scientific hypothesis and clears out the purpose and the problems of the research.

**"The mechanisms of the regulation of the mass media"** consists of seven subchapters where the following themes are discussed: constitutional guarantees of speech freedom, peculiarities of national and international legal regulation of speech freedom, legal theses on freedom of information, achievements of legislature managing printed and electronic media, protection of journalists' rights during elections, cases of violation and abuse of speech freedom, responsibility methods and democratic amendments. The first subchapter is entitled **"The legislative regulation of speech freedom"** where we touched upon the sources of law and order in the area of historical Artsakh, the results of the influence of the foreign legal and political system and the theses concerning freedom of speech and expression in the nationalization process.

The second subchapter, named **"International criteria of speech freedom and Nagorno-Karabakh legislature"**, introduces principles of international rights which, once being established in the legislative system of the country, the Nagorno-Karabakh republic legislative body considers the freedom of free expression as being the superior one given as an inherent right. The prior issue in the country is to solve the problems of the civil rights protection according not only to the requirements of the legislation of the country but also to the requirements of the international documents, chiefly the European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, its attached records, decisions of the European Court and the International Covenant on Civil and Political Rights adopted by the UN General assembly.

The subchapter **“The legal regulation of freedom of information”** is devoted to the protection of the legislative rights of idea seeking, receiving and spreading it by any means by a person or a citizen, and to the secrecy keeping of the legislative information concerning national security.

The subchapter **“Nagorno-Karabakh laws managing the activity of the mass media”** analyzes the laws concerning “Mass Media”, “TV and Radio”, and supplementary legal documents. It also dwells upon the legislative amendments and the mechanisms of the responsibility and protection of the rights of the journalists.

The next subchapter **“The legal adjustment of the elucidation of elections”** analyzes the peculiarities of the legislative theses of election elucidation, the laws and ways of pre-electoral campaigns.

The subchapter called **“Protection of human honour and dignity”** deals with the mechanisms of honour, dignity, civil and legal responsibility of personal life immunity and peculiarities of criminal and legal management of insults.

The following subchapter, **“Extrajudicial and judicial protection of the mass media”**, discusses the choice of the effective means of the legal protection of a journalist in Artsakh, the research of the international experience and the ultimate issue of the protection of the press as one of the most important social institutes.

The second chapter of the dissertation paper, entitled **“The self-regulatory mechanisms of the mass media in the Nagorno-Karabakh Republic”**, consists of two subchapters which thoroughly observe the question of harmony of the legal regulation and self-regulation of the information field. We introduced basic problems of internal and external security of the field, the difficulties of the realization of the professional functions on the background of the projects tending to developing a self-regulatory system in the republic. In the first subchapter **“The basic problems and peculiarities of the self-regulatory system”** the activity of the council of the media and the journalistic organizations formed in Artsakh and the prerequisites of efficient and skilful journalism are presented. Studying the basic problems of the media it becomes obvious that without freedom of expression there can be no social freedom which predetermines the efficiency of the amendments in the country together with political independence.

The subchapter **“The basic ethical principles and violations”** analyzes the ethical behaviour of the mass media in the region. There are cases when we may state that the self-regulation criteria of the media in Artsakh yields. We may state it by seeing improper reference of sources or its absence, conflict of interests, manifestations of accusation, insult and slander, deliberate forgery of facts, unreliable information based on one’s personal opinion. In keeping with information problems the introduction of the self-regulatory mechanisms of the mass media and the development of the independent media are still remained actual.

**At the end** of the dissertation main conclusions during the research are stated.

The list of used literature is attached in the final part of the dissertation.